ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, tegh101@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒՆՎԱՐԻ 2025ԹՎԱԿԱՆԻ N 015-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 7-րդ կետով, 47-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2025 թվականի հունվարի 14-ի N 01/07/1/00245-2025 գրությունը և Տեղ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 136-Ն որոշումը, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի դպրոցականների առարկայական օլիմպիադաների 2024-2025 ուսումնական տարվա քաղաք Կապանում կայանալիք մարզային փուլին մասնակցելու համար Տեղ համայնքի Ա.Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ, Տեղի թիվ 2 միջնակարգ և Ազնիվ Բալասանյանի անվան Կոռնիձորի միջնակարգ դպրոցներից մասնակից աշակերտների տեղափոխությունը կազմակերպելու նպատակով համայնքի բյուջեի սոցիալապես անապահով անձանց աջակցություն բաժնի 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից հատկացնել 20,0 հազ. ՀՀ դրամ :

2. Գումարը փոխանցել Ազնիվ Բալասանյանի անվան Կոռնիձորի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի՝ Նելլի Ալեքսանյանին:

3. Հանձնարարել աշխատակազմի գլխավոր մանագետ-հաշվապահին՝ կատարել համապատասխան ֆինանսավորում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**

2025 թ. հունվարի 17
գ.Տեղ